Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

27.12.2021թ. ***ք.Երևան***

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Ավան, Նոր Նորք և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության ավագ լեյտենանտ Մելինե Հարությունյանս ուսումնասիրելով 20.08.2021թ. հարուցված թիվ 08013860 կատարողական վարույթի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 18.08.2021թ. տրված թիվ ԵԴ/15348/02/20 կատարողական թերթի համաձայն պետք է Թամարա Դավիթի Դավրիշյանից հօգուտ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 695487 ՀՀ դրամ և հաշվեգրվող տոկոսներ:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի համաձայն պարտապանից բռնագանձել նաև բռնագանձման ենթակա գումարի հինգ տոկոսը՝ որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Պարտապանի վերաբերյալ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում առկա են բռնագանձման բնույթի այլ կատարողական վարույթներ:

Կատարողական վարույթով բռնագանձման վերաբերյալ վճռի հարկադիր կատարման ընթացքում պարտապան Թամարա Դավիթի Դավրիշյանի ողջ գույքի վրա բռնագանձում տարածելու պարագայում պարզվել է, որ այդ գույքը օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի և ավելի չափով բավարար չէ պահանջափրոջ հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար: Պարտապանին պատկանող այլ գույք և դրամական միջոցներ չեն հայտնաբերվել, որոնց վրա կարելի է բռնագանձում տարածել:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ, 28.1 հոդվածով և 37-րդ հոդվածի 8-րդ կետով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. *Կասեցնել 20.08.2021թ. հարուցված թիվ 08013860 կատարողական վարույթը՝ 90-օրյա ժամկետով:*
2. *Առաջարկել պահանջափրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 90-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան:*
3. *Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում:*

Որոշման պատճենն ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով:

Դատական ակտերի հարկադիր կատարման մասին,,ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները

ԱՎԱԳ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ԼԵՅՏԵՆԱՆՏ Digitally signed by HARUTYUNYAN MELINE 6507901229 Date: 2021.12.27 19:11:10 AMT ***Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***